



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



881

February 347

12004

491.99-5

5496 ահ


9-19

ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ

ԿԱՄ

1872/ ԳԻՍԱԽՈՐՆ ՈՒ ԻՐ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ * * * (Տէրոյեաց)



ՏՊ. Զ. ՏԵՐՈՅԵՆՅ

Կ. Պոլս



91277-4

411-2001

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ

Կ Ա Մ

1872 ԹՈՒՍԿԱՆԻ ԳԻՍԱԻՈՐՆ

ՈՒ

ԻՐ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Այսպէս սակ Տէր, ըստ հանապարհաց հեթանոսաց մի ուսանիք և ՚ի նշանաց երկնից մի զարհուրիք, զի նոքա երկնչին յերեսաց նոցա :

ԵՐԵՄԻԱ. Ժ. 2

Շատերը լսեցին Եւրոպայի քանի մի աստղաբաշխներուն հրատարակած լուրը՝ որ այս տարի (1872ին) գիտաւոր մը պիտի երևի և իւր շրջանը կատարելու ճամբուն վրայ երկրիս պիտի հանդիպի, ու զարնելով աշխարհիս վերջ պիտի տայ : Այս բանը իբրև թէ իրօք ըլլալու կարևորութիւնը ունի. բաւական հաւատացողներ ունեցաւ. և ինչո՞ւ չի հաւատացուի՝ քանի որ գուշակողները աստղաբաշխ են. ըսել է գիտութեան հակառակ դալու բան մը չէ : Խնդիրը հոս է թէ իրա՞ւ գիտութեանց հակառակ չէ այս բանը : Եկած գուշակութիւնն է :

1872ի գիտաւոր մը պիտի երևի ըստ Եւրոպացւոց մասին 31ին (ըստ մեզ՝ 19ին) իրկուան ժամ 9ին երկնից արևելեան կողմը, իւր ընթացքը բերեալական աստղին և

հասարակածին մէջ տեղը ըլլալով, պիտի երևի բեւեռական
 աստղին ու տրեւելեան պայծառ եօթնաստեղեան համաս-
 տեղութեան մէջ տեղը 25 աստիճանաչափ երկար պոչով
 (մէկ աստիճանը 25 վարակա կամ 25 ժամու ճամբայ են-
 թադրենք ըստ աստիաբաշխից կընէ 625 ժամու ճամբայ)
 այս պոչը մինչև յունիս 20 երկարելով մինչև 55 աստի-
 ճանի պիտի հասնի , և այն ատեն ահագին շուտութեամբ
 երկրիս զարնուելով դիշերուան ժամ 11ը երեք քառորդ
 անցնելով աշխարհ պիտի կործանի :

Ուրիշ պարագաներ ալ կը պատմեն . բայց կարևորու-
 թիւն չունենալուն զանց ըրինք : Այս ըսածէն կը հասկըց-
 ուի որ դիսաւորին մարմինը կամ կէտը չէ՛ երկրիս զարնու-
 ելիքը , այլ անոր ետևի պոչն է . բայց որն որ ալ ըլլայ
 Չափաբերական, Տիեզերաբանական և Բնագիտական դի-
 տութիւններուն հակառակ է որ մէկ մոլորակ մը իւր ընթաց-
 քին մէջ ուրիշ մոլորակի մը հանդիպի կամ զարնուի : Գիտա-
 ւորներն ալ ուրիշ բան չեն այլ երկնից հաստատութեան մէջ
 մէկ մէկ մոլորակ ուրիշ դիւրքով կամ ուրիշ կողմուածքով,
 և երկար շրջանով . որ քանի մի տարիներէն հազիւ կընան
 կատարել իրենց շրջանը :

Չափաբերական գիտութիւնը չի սորվեցընէր մոլորակ
 մը ուրիշ մոլորակի զարնուելիքը , վասն զի մէկ մոլորակ մը
 մէկ երեւելէն մինչև մէկալ երևիլը որ քան ժամանակ տեւելը
 դիտնալու համար անկէց առաջ գոնէ երկու երեք անգամ
 երևցած ըլլալու է . որ անոր շրջանը քանի տարիէն լրանալը
 կամ մէկ երեւելէն մինչև միւս երևիլը քանի տարի տեւելի-
 քը հաշիւ ըլլայ , եթէ այս երևելիք դիսաւորը ասկէց ա-
 ռաջ երևցած է նէ՛ որովհետև աշխարհք կործանած չէ ,
 ըսել է երկրիս չէ պատահեր իւր ընթացքին մէջ , որով
 այս անգամ ալ պատահելիք չունի . չէ թէ որ այս անգամ
 պիտի պատահի նէ ըսել է՛ այս դիսաւորը առաջին անգամն
 է որ երկրէս կերևի . հեռուապէս երբ երևելիքը չի դիտցուիր .

որով սուտ եղած կրկայ մայիս 19ին պիտի երևի ըսելը :
 Եթէ չափաբերական գիտութեան նայինք դիտարկին
 երկրիս զարնուիլը կա՛մ այս ինչ օր երևելիքը սուտ է :
 Ինչպէս որ թէ լուսնի և թէ արեգակն խաւարու մեկը
 ամէն անգամ ծնունդ կամ լուրումն լուսնի եղած ատենը չի
 պատահիր : այլ մէկ դիժի վրայ ըլլալուն կրնայի, նմանապէս
 այս դիտարկն ալ երկրի շրջանին վրայէն կանցնի բայց
 մինչև հիմայ մի և նոյն ժամանակի մէջ միևնոյն կէտին
 հանդիպած չըլլալով այս անգամ պիտի հանդիպին : Ըսուի
 նէ այս հաշիւը ճիշտ եղած կրկայ եթէ իրօք միևնոյն կէտին
 վրայ դանուիլ ըլլայ նէ, բայց երբ մէկ ուղիղ գծի և
 երկու զատ զատ կէտերու վրայ ըլլան նէ՝ այն ժամանակ
 այդպէս բան մը չի կրնար ըլլալ : Իսկ եթէ միևնոյն կէտի
 վրայ պիտի հանդիպին նէ Տիեզերաբանութեան հակառակ
 կուգայ :

Տիեզերաբանութիւնը կը սորվեցընէ որ ինչպէս որ երկ-
 րիս վրայ, նմանապէս երկնային մարմիններն ալ ճգողական և
 վանողական զօրութիւն ունին, ասով դիտարկը եթէ երկ-
 րիս այնքան մօտենայ որ ճգողական զօրութեանը երկրիս
 աղդէ, երկրիս վանողական զօրութիւնը թող չի տար որ
 իրեն մօտենայ և զարնուի, այլ ճգողութեան և վանողու-
 թեան զօրութեանց իրարու հաւասարած մէկ կէտը մինչև
 կուգայ, ու անկէջ ասդին չի կրնար դարձ որ երկնիս զարն-
 նուի, եթէ այս զօրութիւնները ոչնչանան երկնային մարմ-
 միները ամէնքն իրարու կրնան զարնուիլ, ոչ թէ միայն
 այս երևելիք դիտարկը :

Սուրբ գիրքը կըսէ որ կատարած աշխարհին երկնայ
 զօրութիւնները շարժելով պիտի ըլլայ, երկնիքի աստղերը
 իրարու վրայ պիտի իյնան, և որովհետև բնական կերպով
 չըլլալու բաները հրաշքով կրկայ, այս ալ ըլլալու կարե-
 ւորութիւնը ունի : Բայց երբ ըլլալիքը Քրիստոս ինք չը-
 սելէն զատ, հիչ մէկը չիտէ ըսելով լմնայուց, եթէ այդ

հաշիւի տակ ի յնալու բան մը ըլլաք հիշմէկը չիտէ չէր ըսեր :
 Երեւելիք գիտաւորը հարկաւ իրեն կեդրոն մը ունի
 որուն շուրջը կը դառնայ . ենթադրենք որ այս չարագու-
 շակ գիտաւորին կեդրոնը երկիրս է . այն ժամանակ անոր
 երկրիս մօտենալու սահմանը որոշած է , երկրիս վանո-
 ղական զօրութիւնը , որով այն սահմանէն աւելի չի կրնար
 մօտենալ : Իսկ եթէ գիտաւորին կեդրոնը երկիրս չէ՛ . իւր
 բուն կեդրոնին ճգողական զօրութիւնը չի ներէր որ գի-
 տաւորը իւր կեդրոնը փոխելու շափ իրմէ հեռանայ և ու-
 թիչ կեդրոն դառնէ . երկրիս զարնուիլ ըսելը երկիրս իրեն
 կեդրոն ընել և իւր առաջի կեդրոնը ճգել ըսել է : Այս
 ճգողական և վանողական զօրութեամբ է որ հաստատու-
 թեանց մէջի մարմինները իրենց կարողը պահած են . ոչ
 իրարու կը զարնեն և ոչ իրարմէ կը դատուին :

Գիտաւորները իրենց ընթացքին մէջ երբեմն մուտրակի
 մը մօտենալով և անոր ճգողական զօրութիւնը իրեն ազ-
 դելով իւր ճամբէն քիչ մը շեղած կամ աւելի ճիշտ ըսելով
 իւր պահնթացութիւնը տկարացուցած ունի , որնոր աստ-
 դպաշիւները կը հաստատեն . մուտրակ մի ալ երկիրս ըլ-
 լալով երբ գիտաւորը երկրիս մօտենայ ճգողական զօրու-
 թեամբ երկրիս մնաս մը շրնելով գիտաւորին արագու-
 թիւնը կը տկարացնէ . բայց կեդրոնը չի կրնար փոխել ,
 վասն զի գիտաւորները իրենց ընթացքին մէջ երկրէս շատ
 մեծ հաստատուն աստղերու մօտեցած են և իրենց կեդ-
 րոնը փոխած չունին . անոնց վանողական զօրութիւնը ինչ-
 պէս ազդեր էնէ , երկրիս ալ վանողական զօրութիւնը
 այնպէս ազդէմ :

Բնական գիտութեամբ պէտք է գիտաւորին մարմնայն
 ինչ ըլլալը գիտնալ , որ անկէց վերջը երկրիս զարնուելով
 ինչ եղած կրլայ նէ գիտցուի :

Գիտաւորներուն ինչ տեսակ մարմին ըլլալուն վրայ դա-
 նադան կարծիքներ կան . բոլոր կայ որ գիտաւորին բուն

մարմինը երկրիս և ուրիշ երկնային մարմնոց պէս է . իսկ
 ետևի լուսաւոր պոչը՝ աստղին մէջի հրաբուխն է . որ իր-
 մէն դուրս կելլէ և մեզի անանկ լուսաւոր պոչ կերևի : Այս
 կարծիքս ճշմարիտ չըլլալը ասպացուցանելու համար լուսնի
 մէջ ալ հրաբուխ գտնուիլը կը հաստատեն աստղաբաշխներ-
 րը : Եւ լուսինը բնաւ լուսաւոր պոչ ունեցածի պէս տես-
 նուած չէ՝, ասկէց կը հետևի որ անոր պոչը ուրիշ բան մը
 ըլլալու է :

Եթէ իրօք աստանկ լոյս մըն է , երկրիս զարնելովը եր-
 կիրս կը լուսաւորէ , ուրիշ բան մը չընէր :

Հիները կը կարծէին որ դիսաւոր աստղերը մտնողըթին
 մէջ դոյացած երևոյթներ են . բայց վերջերը ստուգուած
 է , որ մտնողդէն դուրս դատարկութեան մէջ են այս
 մարմինները :

Պիէլայ դիսաւորը որ անմէն անգամ երևելուն այսպէս
 լսօսքեր կելլէ , վասն զի միւս դիսաւորներէն աւելի արե-
 դական և երկրիս կը մօտենայ , անոր համար Նեւթոն և
 կուռնելիաս Բաւ աստղաբաշխները դիսաւորին երկնիս զար-
 նուելու շափ մօտենալը կարելի սեպուի ալ նէ՝ մասս մը չի
 պատահեր ասկէց կըսեն , որովհետև անոնց մարմինը գո-
 լորշիէ բաղկացեալ է . և այս գոլորշիքը՝ երկիրս պատու
 օդէն շատ թեթեւ է . ուստի որքան մօտենայ ալ նէ՝ օդոյ
 վերին սահմանէն ասդին չի կրնար անցնել . ուր աշխարհիս
 մէջ դոյացած գոլորշիքն ալ միշտ օդէն վեր կելլելու մի-
 առմ ունի : Բայց թեթեւ և անոր մարմին մը իրօք օդէն
 անցնի և երկնիս զարնուի նէ՝ ի՞նչ կընէ , ինչ որ քարին
 կընէ բամպակը զարնուելովը :

Ուրիշ կարծիք մըն ալ և ամենէն հաւանականը կե-
 րելի . դիսաւորները թափանցիկ մարմին մը ըլլալով և ի-
 ղենց շուրջը մթնոլորտ մը ըլլանուն արեգական ճառագ-
 դայթները անոր մէջէն անցնելով անանկ լուսաւոր պոչ մը
 կը ցըցընեն . եթէ այսպէս ալ ըլլայ ամէն օր ուղղակի

մեզի կուգայ արեգական ճառագայթները բայց բնաւ
 աշխարհք կործանած չէ՛ . եթէ արեգական ճառագայթը
 զիսաւորին մէջէն անցնելով ապակիի մէջէ անցածի պէս
 կիզող զօրութիւնը պիտի աւելնայ ու երկիրս պիտի այրէ
 լատինէ՛ . այդ ալ միայն այն փոքր տեղին համար կըլլայ
 սւր որ արեգական ճառագայթը զիսաւորէն անցնելով
 երկրիս կը հանդիպի . Թէ երկրիս կեդրոնին հուրը պի-
 տի բռնակցը նէ՛ անով ալ ամբողջ երկրիս փսաս մը ըրած
 չըլլար . այլ միայն հրաբուխ մը կրնայ պատճառել որնոր
 արդէն քանի մը հատ կենալովը մեծ փսաս մը ըրած չու-
 նին :

Որքան որ աշխարհք հըրով վերջանալիքը սուրբ դէբքը
 կիմացընէ ալ նէ՛ այս կերպ կրակ չէ :

Գիսաւորներուն թափանցիկ մարմին մը ըլլալը արդի
 աստղաբաշխներն ալ կը հաստատեն , զիտելով որ գիսա-
 ւորէն բաւական հեռու եզրը հաստատուն աստղի մը լոյսը
 կը տեսնուի երբ հաստատուն աստղը գիսաւորը և երկիրս
 մէկ ուղիղ դժի մը վրայ ըլլան . որ եթէ գիսաւորին մար-
 մինը կարծր բան մը ըլլար նէ՛ հաստատուն աստղին լոյսը
 պիտի չերևար : Ինչպէս որ լուսնի խաւարումն եղած ժա-
 մանակ կըլլայ :

Ս.յս բոլոր բաները աստղաբաշխները զիտելով չեն ը-
 տած և ոչ ալ կրսեն թէ երկիրս պիտի կործանի . վասն զի
 իրենք գիտած ու հաշուած են որ եթէ երկու երկնային
 մարմին իրարու զարնուելու կարելիութիւնը ունենայ նախ
 և առաջ Էնքէ և Պիէլա գիսաւորները իրարու զարնուելու
 կարելիութիւնը ունին իրենց շրջաննին կամ ծիր խաւար-
 մաննին իրար կտրելուն համար , և եթէ այդպէս բան մը
 պատահի մենք ևս կարող պիտի ըլլանք տեսնել , իրենց
 արեգական մօտ եղած ժամանակնին պատահելուն համար ,
 բայց և այնպէս դարձեալ աստղաբաշխները կը հաստատեն
 Հալէ գիսաւորին ընթացքը զիտելով որ իւր շրջանը 73

տարիէն պիտի լրմընցընէ , բայց երբեմն 76 կամ 77 տարի
կը տևէ , այս հասարակական պատճառ կը գնեն իւր ընթացից
մօտ հաստատուն աստղեր գտնուիլը , և անոնց ճգա-
ղական զօրութեամբը իւր արողընթացութիւնը կորսընցը-
նելով աստղաբաշխներուն և բնագէտներուն տուած վերո-
գրեալ տեղեկութիւնները չի կրնալով ջրել . շատերը կը-
սեն որ՝ աշխարհը պիտի կործանի ըսելը չէ թէ երկրի նիւ-
թական աւերումը պիտի ըլլայ . այլ բարոյապէս կործանի
պիտի . ինչպէս որ 1265 յուլիս 11 թուականին գիսաւոր
մը երևցաւ ասիայի կողմերը և երթալով պոչը երկնցաւ .
(ինչպէս որ այս տարուան գիսաւորին պիտի ըլլայ .) գու-
շակեցին թէ Թաթարաց Հուլաղու իշխանին երկիրները պի-
տի ընդարձակի մեծնայ . բայց գուշակածնուն պէս չըլլա-
լով այն տարին Հուլաղու իշխանը մեռաւ :

Քրիստոսէ 43 տարի առաջ գիսաւոր մը երևցաւ . որ
այն ժամանակի Յուլիոս իշխանը պատերազմներով աշ-
խարհը տակն ու վրայ կընէր . որուն գուշակիչ համարելով
գիսաւորը յուլիոսի աստղ ըսուեցաւ :

Քրիստոսէ 60 տարի ետքը Ներոնի օրերը երևցած գի-
սաւորը դարձեալ արիւն հեղութեանց գուշակիչ եղած ըլ-
լալ կը կարծեն :

Գիսաւորները չարագուշակ ըլլալնուն իբրև ասպոցոյց
Պորսղըր անուն անգղիացին դիրք մը դրած է . և որքան
գիսաւոր երևցեր էնէ անոնց տարին պատահած դէպքերը
մեծ աշխատութեամբ ժողովեր է . բայց անանկ տարիներ
պատահած են որ գիսաւոր երևցեր է . ու բնաւ բան մը
չէ պատահեր . կամ այնպէս տարիներ եղեր են՝ որ գիսա-
ւոր չէ երևցեր և մեծ դէպքեր պատահեր է : Յիշեալ հե-
ղինակը չէ ուղեր ասոնք դիտել :

Աստղաբաշխները շատ գիտողութիւններ ընելով վերջա-
պէս կազացուցանեն որ գիսաւորները բնաւ աղդեցութիւն
մը չունին երկրիս . ո՛չ օդին տաք կամ սառ ըլլալուն կամ

հիւանդութիւն և պատերազմ ըլլալուն . միայն անոնք առ
նանկ մարմիններ են և դատարկութեամբ մէջ կը պըտըտին
երբ իրենց շրջանը դայ կը տեսնուին :



Եթէ անանկ մտածողներ կային որ իրօք աշխարհ պի-
տի կործանի , և պատրաստութիւն կը տեսնէին հանդերձ-
եալին համար , անանկներուն իրենց դիտաւորութիւնը չի
փոխելը պէտք է լաան զի երբ մեռնելիքնիս չեմք գիտեր
այսօր կամ վաղը , կարելի է քանի մը ժամէն . ասոնց շատ
փորձեր ունիմք , անոր համար միշտ պատրաստ դանուիլը
աղէկ է . թէպէտ և դիտաւորը աշխարհք չի կործանիր .
բայց մէկու մը մեռած օրը աշխարհք կործանած է , դոնէ
իրեն համար :

Ըսածներէս հասկցուեցաւ որ դիտաւորի մը աշխարհս
կործանելը նախընթաց եղելութենէ մը հաւաստիք չունի .
և ասանկ բանի մը ըլլալիքը որ դիտութեան սկզբունքով
չխմացուիր՝ գերբնական յայտնութեամբ իմացուելու է . Ը-
սել է որ այս գուշակութիւնս ընողներուն աստղաբաշխ
ըլլալը քիչ կուքայ . Մովսէս մարգարէին պէս մարգարէ
ըլլալու են : Եւ թէ որ ձգողական և վանողական զօրու-
թիւնները մտիկ չընելով դիտաւորը իր չափին աւելի աշ-
խարհիս պիտի մօտենայ նէ՛ հրաշք եղած կըլլայ . ըլլալիք
հրաշքն ալ գուշակելը դարձեալ գերբնական յայտնու-
թեամբ կըլլայ , և գուշակողը մարգարէ : Աստի այս գու-
շակեալ դիտաւորին զօրութենէն և ընելու կարծուած գոր-
ծէն վախցողները Ռաւիթ մարգարէին ըսած մարգարդէն
կըլլան որոց համար ըսաւ . « Անդ երկիցեն զերկիւղ .
ուր ոչ իցէ երկիւղ » . այսինքն՝ վախ չեղած տեղը պիտի
վախնան :



ԳԻՆ և ՂՐՇ

«Ազգային գրադարան



NL0107975

Գիրքը ենթարկվել է արտազանման

10/11 427

«Ազգային գրադարան



NL0107974

«Ազգային գրադարան



NL0107971

